№ 65 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 25 ՄԱՐՏԻ 1919 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 25 ՄԱՐՏԻ № 65

ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առանձին համարները Թիֆլիսում 75 կոպ., գաւառներում և երկաթուղային կայարաններում 1 ռուբլի։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мша
Tiflis Rédaction «Mschak»
Гановская, 3.

Խմբագրատան տելէֆոն № 2-53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողի (պէտիտ) I երեսին՝ 1 ռ., IV երեսին՝ 60 կոպ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել թէ հին հասցէն և թէ 3 ռուբլի։

Եւա Աւագեանը և իր զաւակները՝ Աւագ և Արշակ խորին կսկիծով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր սիրելի ամուսնու, իսկ երկրորդները իրանց թանկագին հօր՝

Արշակ Աւագեանի

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 23-ին երկար և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Մարմնի յուղարկաւորութիւնը առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից (Հավլաբար, Բեհութովսկայա, № 12)։ Հոգեհանգիստը մարտի 26-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։

Հ.3. 1—1

ՄՇԱԿԻ՝ բաժանորդագինը

Թիֆլիսում			Գաւառում		
Մարտ ամիսը		12 ռուբ.	Մարտ ամիսը		14 ռուբ.
Ապրիլ	„	15 ռուբ.	Ապրիլ	„	17 ռուբ.
Մայիս	„	15 ռուբ.	Մայիս	„	17 ռուբ.

ՆԱՒԹ

I. Թ. Ք. Վ. Պարենաւորիչ Բաժանմունքը, ի լրացումն մարտի 20-ի յայտարարութեան, սրանով յայտնում է ի գիտութիւն Թիֆլիսի քաղաքացիների, որ սոյն մարտի 22-ից Բաժանմունքը կը սկսէ նաւթի բաժանումը քարտի I սէրիայի քարտերի I տալօններով, նոյնպէս և շաքարի 6-րդ սէրիայի քարտերի 2-րդ և 3-րդ տալօններով՝ մարտի 20-ին յայտարարուած պայմաններով։

II. Միաժամանակ Բաժանմունքը յայտնում է ի գիտութիւն տանտէրերի, որ սոյն մարտի 22-ից Թաղամասային Պարենաւորիչ Կոմիտէները և Շրջանային Կոմիտէները կը սկսեն բաժանել նաւթը բակերը և փողոցները լուսաւորելու համար՝ փութը 1 ռ. 52 կ.։ Տանտէրերը կարող են անմիջական կերպով դիմել նոյնպէս Պարենաւորիչ Բաժանմունքին՝ նաւթ ստանալու համար։ Նաւթի գինն է պահեստում՝ 53 ռ. փութը։ Միանուագ իւրաքանչիւր տան համար կը տրվի 15—30 փութ։ Տնատէրերից յայտարարութիւններ կընդունվեն միայն միացեալ կերպով, այն է՝ 20 տնից ոչ պակաս։ Յայտարարութիւնը պէտք է վաւերացված լինի Տնային Կոմիտէների նախագահների կողմից։

տ. 3—2

Վիրահայ Ազգ. Խոր. գաղթականական բաժնի յատ

լիազօր բժիշկ ՎԵՐԴԵԱՆԸ սրանով յայտարարում է բոլոր այն գաղթականների, որոնք «Закавк. Русс.» անդրաւա կայանից հաց են ստանում մեր տալ գաղթականական վկայականներով, բոլոր այդ վկայականները ներկայ ամսի 25-ից համարվեն անվաւեր և այդ պատճառով անհրաժեշտ է ստանալ նոր վկայականներ, որոնք տրվում են լիազօրի Չիգրաշէնի բակում գտնվող գրասենեակի կառավարիչ Ծերուն վարդապետից։

Յատուկ լիազօր՝ բժ. Վերդեան

տ. 233. 2—1

ՎԵՆԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ

Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

Հիմնաւոր և կարճ ժամանակում բժշկութիւն սուր և խրոնիքական տրիպերի (սուսանակ) նորագոյն միջոցներով և սէյֆեռով։ Բժշկութիւն սիֆիլիսի (ներարկումն Էրլիխի բուկական 914 և 606-ի) ջանքերի, մաշկային, կոցեի և կանացի հիւանդութիւնների։ Սրսկումներ։ Ճշմարտ եւստական բալզամի բժշկութիւն նորագոյն միջոցներով և էլեկտրականութեամբ։ Ընդունելութիւնը ամեն օր 4—6 ժամը, կանանց՝ 3—4 ժամը Վորոնցովի արձան. մօտ՝ Семеновская ул. № 9, վերին յարկ. տ.60. 100—48

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. ՍԵՀՐԱԲԵԱՆՑ

Մասնագէտ ներքին հիւանդութիւնների— Բաքուից և այլն. ընդունելութիւնը՝ իր բնակարանում լոյսի և էլեկտրաբուժական կաբինէտում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։

Ամեն օր՝ 9—1 և 5—8 ժ. երեկ.։ Բեհութովսկայա փ., № 28, հեռ. 7—92.

տ. 128. 0—27

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

ընդունում է յատկապէս միզասեռ., վեներական և սիֆիլիս հիւանդութիւն ունեցողներին։

Առաւօտ. ժ. 10—12-ը, երեկ. ժ. 5—7-ը. Սոմենովսկայա փ. 18 (Լորենցովի արձանի մօտ)։ Բնակարանը Սեմենովսկայա, 16։

տ. (ա. հ. շ. կ.) 369. 100—93

ԲԺԻՇԿ

Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ

Մասնագէտ մանկաբարձութեան, կանանց հիւանդութիւնների, երանց միզասեռական և վեներական ախտերի («606» և «914»), Էլեկտրաբուժում արգանդի և ձուարանների խրոնիկական բորբոքումների։ Ամեն օր, երեկ. ժամը 5—7-ը, կիրակի օրերը առաւ. ժ. 10—11-ը։ Հասցէն՝ Սվքեանի փողոց, Ավլաբ-Աղաբեանի տուն, № 3, բն. 12, հեռախօս № 16—71.

տ. (ա.հ.շ.կ.) 100—97

Կանանց հիւանդ. եւ մանկաբարձական

Մասնաւոր հիւանդանոց

Կորգանովսկայա փ. № 7. Տել. 18—18.

Ընդունելութիւն յղի կանանց և ծննդկանների օրվայ ամեն ժամին։

Ներքին հիւանդներին ընդունում է

ԲԺԻՇԿ

Գ. Ց. ԱՐԵՇԵԱՆԸ

առ. ժ. 11—1-ը և 5—6 երեկ.։

տ. 95. 50—23

ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՇՌԱՅԼՈՂ ԼԻՆԵԼ

Ալէքսանդրապոլի մեր թղթակիցը հաղորդում է, որ այնտեղ ցուցակագրութիւն է բացված Կամաւորական բանակի համար։ Միւս կողմից Սիբերիայից և Գերմանիայից վերադարձող հայ ռազմագերիները յայտնում են, որ Կամաւորական բանակի իշխանութեան ընթարկված երկրամասերում նրանց արգելքներ են հանդիպում։ Նրանց առաջարկ է լինում մտնել Կամաւորական բանակի շարքերը և այս պատճառով ձգձգվում են ճամբորդութեան համար անհրաժեշտ ձևակերպութիւնները։ Հայ հայրենադարձ ռազմագերին սովից ու ցրտից ազատվելու համար յաճախ դայթակղվում է և նորից քաղաքացիական կռւի արիւնոտ դաշտը գլորւում։ Մենք գիտենք նաև, որ Կամաւորական բանակն ու Թերեքդաղի իշխանութիւնը հայ փախստականներին ցոյց տուած դառն հիւրընկալութեան գինը պահանջում են մեր աստանդական եղբայրներին՝ կռւի մէջ մտնել։ Հակաբոլշևիկեան պրոպագանդը խաղցնելու համար անցեալ ամառ Հանքային Ջրերի Թերեքդաղի իշխանութիւնը հայերին պարզ ու որոշ առաջարկում էր «Կարմիր բանակի» մէջ մտնել և ձեռնամուխ էր եղել Լենինի անունով մի ամբողջ հայկական գունդ կազմել։ Անա այսպէս արիւնի գին է պահանջում այն մի կտոր հացը, որ հայ փախստականը կարծում է հեշտութեամբ ձեռք բերել Հիւսիսային Կովկասում և Ռուսաստանում։

Լաւ այս երեւոյթի գիտաց, երբ հայերն տանջւում են արեան տուրք տալ Ռուսաստանի եղբայրասպան կռւին, յանցանք կը լինի մեզ համար։ Մենք չենք կարող շռայլող լինել մեր արեան նկատմամբ։ Մենք այժմ հաւաքելու ազգ ենք դարձել և մեր յոյսը կապել ենք հոգեվարքի տակ ապրող դառն հայ բեկորների հետ։ Իսկ գուցէ է գալիս, որ այդ բեկորներն էլ գիշատվում են բարեկամների ու չարակամների ձեռքով։ Բոլշևիկները «Կարմիր գունդ» են կազմում «ընկեր Լենինի» անունով, ստանում հայ ռամկական ուժը, և դրանից ոչ մի շահ չունի աւերակների բաժին դարձած Հայաստանը։ Կամաւորական բանակը որսում է մեր քաղցած փախստականներին ու ռազմագերիներին և նրանց մահվան դաշտը յղում, և դարձեալ Հայաստանը կորցնում է իր զաւակներին, իսկ ինքը մնում անմխիթար ու ազատ։ Ֆրանսիան կազմակերպում է Արեւելեան լեգեոն, որ հայերի իսկ ձեռքով անիրագործելի է դարձնէ մի և անբաժան Հայաստանի գաղափարը։ Էլ ո՞ր մէկը թուենք։ Բաւական չէր, որ Ռուսաստանը 150,000 հայ զինւոր վատնեց Լեհաստանի ու Գալիցիայի [illegible], մեզ արիւնաքամ արաւ և վերջն էլ մատնեց վայրագ թշնամու երախը,—այժմ փոքր վաշտներով շարունակվում է հին գործը, և հայ ռազմարդը դարձել է արիւնավաճառ կապալէլի բանակներում և ուրիշ քաղաքական հաշիւներում։

Բաւական է, պէտք աղաղակէ ամեն մի արթնացած հայ մարդ։ Բաւական է, որքան ուրիշի ձեռքին գործիք եղաւ հայը։ Հայ մամուլի մէջ, հայ հաւաքոյթներում, բոլոր շրջաններում և հաստատութիւններում, ուր հայը հանդիպում է իր հայրենակցին, պէտք մի խնդիր ծեծվի՝ հայի արեան պահպանումը, մի քարոզը լսվի՝ հայի արեան խնայողութիւնը։

Ինչ է անում Հայաստանի կառավարութիւնը։ Ինչու է նա հանդուրժում, որ իր քթի տակ վաճառքի հանվի մեր արիւնը։ Ինչու չէ նա պահանջ դնում Կամաւորական և Կարմիր բանակներին՝ ազատ արձակելու հայի օձիքը։ Միթէ նա կամենում է սրբված, մաքրված տեսնել Հայաստանը հայ ժողովրդից և անապատների վրա հիմնել իր իշխանութիւնը։ Հայի արեան իւրաքանչիւր կաթիլը, որ Հայաստանի հողի վրայ չէ թափվում, միմիայն շղթայ է կռում մեզ համար։ Հասկանանք, վերջապէս, այս ակնբախ ճշմարտութիւնը։

MEMENTO MORI

Համաշխարհային պատերազմը իր վերջնական հետևանքներով ու այդ պատերազմից բղխած ռուսական մեծ յեղափոխութիւնն իր երկու տարվայ խռովալի պատմութեամբ առաջ է բերել նաև մինչև այժմ գոյութիւն ունեցող գաղափարական արժէքների վերագնահատում։

Սոցիալիստների համար գաղտնիք չէ, որ յեղափոխութեան գրոհէ բոլոր դիրքերն այսօր մենք տեսել ենք տակ և շարունակում ենք դեռ ևս քայլ առ քայլ կորցնել վերջին յենակէտները։ Գաղտնիք չէ, որ Կովկասում այժմ առանձնայատուկ քաղաքական-հասարակական չեզոքացում է կատարվում, ազգային ու տնտեսական անսպասելի նոր պայմաններ են ստեղծվել։

Արդեն այս ամենի հանդէպ սոցիալ-դեմոկրատները պէտք է չշարունակէինք կոչել նախորդ գործելակերպին և յամառ կրկնել նոյն կարծիքներն ու տեսակէտները, որոնք տրամաբանօրէն բղխում էին նախկին պարագաներից։

Մեր ամբողջ յեղափոխութեան հիւանդոտ ընթացքի պատճառների նոյն իսկ մակերեսային քննութիւնը ցոյց է տալիս, որ ոչ միայն մասսաները, այլ և նրանց ղեկավարների մեծամասնութիւնը հաշւի չեն առակլ ընաւ մեր յեղափոխութեան բնոյթն ու նպատակները, ընկնելով շատ անգամ կոպիտ սխալանքների մէջ։

Սակայն դժբաղդութիւնը ոչ թէ այդ սխալների մէջ է. չէ՞ որ մարդս սխալական է։ Այս դժբաղդութիւնը նրանումն է, որ, գիտակցելով հանդերձ մեր կատարած սխալները, շարունակում ենք կուրօրէն նախկին բռնած ընթացքը, փոխարէն յամառութեամբ դուրս քաշելով կառուցված նախկին գաղափարների հին, մաշված արսենալը։

Սա մի տարօրինակ հոգեբանութիւն է, որ այնքան յատուկ է դարձել մեր սոցիալիստներից շատերի համար. դա մի մասամբ վախկոտութիւն է կամ քաղաքացիական կամքի թուլութիւն, որ թաքնվում է հանապազ մարքսիզմի «օրթոդօքսութեան» կամ սոցիալիզմի «հետեւողականութեան» ֆիկցիայի տակ։

Պրօլետարիատի բազմաթիւ ղեկավարներ, սոցիալ-դեմօկրատիայի իդէօլոգներ գիտենք, որոնք ընկերական նեղ շրջաններում, ոչ պաշտօնական, մասնաւոր վիճաբանութիւններում ու մտքերի փոխանակութեան ժամանակ գիտակցում են իրենց դրութիւնը, ստեղծված նոր պայմաններն ու յեղափոխութեան ներկայ սխալները թէ գաղափարական և թէ գործելակերպային բնագաւառներում, ընդունում են արժէքների վերագնահատման անհրաժեշտութիւնը։

Բայց երբ բանը հասնում է հրապարակական արտայայտութիւնների և մեծմեծ առթիւ ռէզօլիւցիաներ հանելուն, կորցնում են իրանց քաջութիւնը և էլի հին երգն են երգում...

Միթէ գիտական սոցիալիզմն ու մարքսիզմը քարացած չինական փիլիսոփայութիւններ են, որ անփոփոխ սառել են մի կէտի վրա։

Կ. Մարքսը իր դասակարգային պայքարաւթեան մէջ չէր դրել բնաւ այնպիսի գիտական աշխարհահայեացք, որ մեռած, անկենդան դոգմա դառնար, որով բոլոր մեր քաղաքական հասարակական-քաղաքական երեւոյթներն ու փաստերը կոխէինք պրօկրուստեան մահճակալի մէջ։ Գիտական սոցիալիզմի հիմնադիրները, մանաւանդ Կ. Մարքսը, մեզ տուել են մի մեթօդօլոգիա, որը ճանաչում է միայն օբյեկտիվ տուեալներ, որոնց հիման վրա պիտի կառուցվի ամեն մի ժամանակի հասարակական իդէալը և այստեղ էլ համապատասխան պրօլետարիատի ու դեմօկրատիայի վարքի գիծը։ Սակայն այդ օբյեկտիվ տուեալները ժամանակների ընթացքում փոխվում են հասարակական-տնտեսական ու քաղաքական-սոցիալական նորանոր պայմանների ոլորտներում. ուրեմն համապատասխան այդ նոր տուեալների պիտի կառուցվի ամեն անգամ մեր դիրքն ու գործելակերպը։ Ապա թէ ոչ, կառչելով շարունակ հին, մի անգամ արդէն այլ օբյեկտիվ պայմաններից արտաբերած տեսակէտներին, մենք մխրում ենք մատերիալիստական ըմբռնումն և ընկնում անհիմն իդէալիզմի կամ արկածախնդրական գործելակերպի մէջ, որ յղի է բացասական, կործանարար հետեւանքներով։

Ահա այսպիսի մօմենտ ենք վերապրում ներկայումս Կովկասում, ուր հայ դեմօկրատիայի առաջ անսպասելի ստեղծվել են նոր քաղաքական-հասարակական պայմաններ, նախկիններից միանգամայն տարբեր տնտեսական յարաբերութիւններ։ Եւ այս բոլորի հանդէպ տրամաբանօրէն ծառանում է պրօլետարիատի, մասնաւորապէս հայ դեմօկրատիայի ու ղեկավարների վարքի համակերպումն տուեալ օբյեկտիվ պայմաններին։ Անցեալի փորձերը մեզ պէտք է զգաստացնեն և դիւրացնեն պրօլետարիատին որոշելու իր յետագայ առողջ քաղաքականութիւնը ստեղծված նոր պայմաններում։

Կանխակալ կարծիքները առաջ են բերել միշտ իրենց թէքի լուսաբանումն և տարել են սխալ ուղիներով, ինչպէս որ եղել է դժբաղդաբար մեր յեղափոխութեան պատմութեան ամբողջ ընթացքում ու պատրաստել են ամեն անգամ մեր պարտութիւնները։ Հանդուրժել այս բոլորը, կը նշանակէ նոր պարտութիւնների դուռը բաց անել. նոր գերեզմաններ փորել հայ դեմօկրատիայի և շարունակվող առանց այն էլ «խորտակված» յեղափոխութեան համար։

Եթէ հայ դեմօկրատիան գիտակցում է մօմենտի լրջութիւնը, եթէ սոցիալ դեմօկրատիայի հայ ղեկավարները ըմբռնում են ներկայ օբյեկտիվ պայմանները, պէտք է որ առաջ փութան որոշելու լաւ այնմ իրանց դիրքը. պէտք է նրանք վերջ տան անշունչ դոգմատիկ տեսակէտներին, երբ հայ իրականութեան մէջ տեղի են ունենում հիմն ի վեր փոխվող սոցիալ-քաղաքական ու տնտեսական ցայտուն փաստեր։ Չը փակենք մեր աչքերը, երբ ամենուրեք կատարվում է բոլոր արժէքների վերագնահատումն։

Հակառակ դէպքում մենք ձեռքից բաց կը թողնենք յարմար մօմենտը, կը տապալենք հայ դեմօկրատիայի գործը, թողնելով դա արկածախնդիր քաղաքական ներկայացուցիչներին, որոնցից հայ ժողովուրդը տուժել է մինչև այսօր։ Թող սոցիալ-դեմօկրատիայի հայ ղեկավարներն ու իդէօլոգները չը մոռանան, որ իրանց վրա անհամեմատ պատասխանատւութիւն է ծանրանում և չը տանեն մեր առանց այն էլ թոյլ, անկազմակերպ պրօլետարական մասսաներն այնպիսի ուղիներով, ուր խոպան վարկաբեկվի սոցիալիստական աշխարհհայեացքը ու չարաչար կործանվի հայ դեմօկրատիան։

Դա կը լինի սոցիալ-դեմօկրատիայի մահը հայ իրականութեան մէջ. զգոյշ լինենք, չը սպանենք նրանց և յիշենք այդ Memento mori!

Խ. Սամուէլեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

ՍՏ. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԵՒ 25 [illegible]ՍԱՐՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս յայտնի է, այդ [illegible]միսարների մասին Բագուի թերթերն [illegible] բերել է Ասխաբադից եկած Վ[illegible]այկինը, որ ներկայումս գտնվում է [illegible]։

Ըստվեան Չայկինի հաղ[illegible]էջ ասւած է, թէ սպանութիւնը [illegible] է անգլիական (Ասխաբադի) ներկ[illegible] դիտութեամբ, այդ պատճառով [illegible] Յօմսօնը բռնասալով, որ Չայկինը գտն[illegible] Թիֆլիսում, կըրակի օրը հանձել նր[illegible]ն հարցաքննութեան։

Չայկինը քարտուղարի և թարգմանի հետ ներկայանալով գեն. Յօմսօնին՝ նրա առաջարկին—բացատրութիւններ տալ իր հրապարակած լուրի մասին—Չայկինը պատասխանել է նախ և առաջ պարզել թէ գեն. Յօմսօնը քննիչը հանդամանքով է կանչել իրան։

Յօմսօնը պատասխանում է «ոչ», բայց ցանկանում է բացատրութիւն լսել անգլիական ներկայացուցչի վրա բարդած մեղադրանքների մասին։

Չայկինը յայտնում է, որ իր բացատրութիւնները կը տայ միայն քննիչ ատեանին և առաջարկում է կազմել քննիչ յանձնաժողով։ Բայց գործը քննութեան սկսելու համար տալիս է մի քանի անուններ [illegible]ջէ այլոց Դրուժկինի [illegible], որ Ասխաբադից անգլիական դրամներով [illegible] է ընկել դէպի Լոնդոն[illegible]։

Հարցաքննութեան վերջում [illegible]յտվում է, որ Դրուժկինը գտնվում է [illegible]ում, որտեղից պիտի անցնէ Լոնդոն. Դրուժկինը այժմ ձերբակ[illegible]։

ԿՈԼՉԱԿԻ ԿԱՌԱՎԱՐ[illegible]Ը

Սիբիրից Թիֆլիս [illegible] ներկայացուցիչ Մուստաֆա [illegible]ցի ժամանակ մեր աշխատակցին [illegible] է հետեւեալը.

Աւֆայի դիրեկտօրիան ցրլուց յետոյ ծովակալ Կոլչակն իր իշխանութիւնն ամրապնդել է ամբողջ Սիբիրում։ Նա տիրապետում է Վլադիվօստոկից մինչև Ուրալեան լեռները։ Իր կառավարութեան դեկլարացիայով նա իրան յայտարարել է ժամանակաւոր երկրի կառավարիչներ օրէնական և իրաւազօր յանորդ և գերագոյն վարիչը Ռուսաստանի։ Եւ թէեւ այդպիսին հրատարակել է յատուկ օրէնքներ, թէ այն մարդիկ, որոնք փորձեր կանեն տապալելու գերագոյն իշխանութիւնը կամ վրա յղացումներ կանեն նրա մասին, կենթարկվեն մահապատժի. իսկ այն երկրները, որոնք կը ձգտեն Ռուսաստանից բաժանվելու, այդ երկրների վարիչները նոյնպէս կենթարկվեն մահապատժի։

Կոլչակն ունի բաւականաչափ զինական ոյժ։ Նրան են ենթարկվում Սիբիրի բոլոր ոյժերը և չեխո-սլօվակների գնդերը։ Նա հրաման է արձակել բաշկիրներին և կիրգիզներին զինաթափվելու, բայց դա տեղի չի ունեցել, որովհետև այդ երկրները՝ Բաշկիրիան ամբողջապէս, իսկ Կիրգիզական երկրի մեծ մասը՝ գտնվում են խորհուրդների իշխանութեան ձեռքին։ Բաշկիրիան կազմում է ինքնավար երկիր, ունի իր զօրքը (մօտ մի դիվիզիա) և առանձին հրամանքներով միանում է Ռուսաստանին։ Խորհրդային իշխանութեանը յատուկ օրէնքով ճանաչել է նրա անկախութիւնը։ Բօլշևիկների մայրաքաղաքն է Բայմակ գիւղը։

Կոլչակը յոյսը միայն իր ոյժերի վրա չի դրել։ Նա ապաւինված է և անգլիական գեն. Նոկսի աջակցութեան և Ուրալի կօզակների բարեկամական տրամադրութեան։

Սիբիրը, հակառակ տարածված լուրերի, չունի իր առանձին դրամը։ Շրջանառութեան մէջ է համառուսական թղթադրամը։ Իսկ վերջերս դրա պակասութեան շնորհիւ Սիբիրի պետական բանկը բաց է թողել 500 րուբլիանոց արժէթղթեր, որոնք հաւասար գին ունեն դրամի հետ։

«Рус. Вѣд.»-ի աշխատակիցների մի խումբ, Ա. Ի. Բոլօրուսովի գլխաւորութեամբ Եկատերինենբուրգում հրատարակում են «Отечественныя Вѣдомость» որ պաշտպանում է Կոլչակի կառավարութիւնը, իբրև համառուսական կառավարութիւն։

Կ. ՊՈԼՍԻ «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԹԵՐԹԻՑ

Պերճախօս փաստաթուղթ մը

Ինչպէս յայտնի է, Թալէաթ փաշայի հրէշային կառավարութիւնը, ամբաստանելու համար հայերը, հրապարակութեան տուաւ անծանօթ հատոր մը, ուր զետեղուած են կարգ մը փաստաթղթեր։ Այդ փաստաթղթերը հայերու դէմ ուղղուած ըլլալէ աւելի, մէջտեղ ծանր ամբաստանագիր են այն բռնակալներուն դէմ, որ հայ ժողովուրդին հետ կործանեցին Թիւրքիան։

Հետաքրքրական գտանք հոս դնել այն հեռագիրը, զոր «Դրօշակ» խմբագրութիւնը ուղղեց 1915 յունիս 2-ին, Ժնեւէն, Բ. Դ.

Կը հրատարակենք մանաւանդ այն պատճառով, որպէս զի գինովութենէ սթափած թուրքը ուղղակի տեսնէ հիմա, թէ ինչպէս իր ոճրագործ ղեկավարները դրուատիքի արժանի արտայայտութեան մը մէջ ճշմարտութեան ձայնին մէջ պախարակութեան, ամբաստանութեան փաստ մը նշմարած են.

«Այս պահուն՝ երբ կսկծալի տառապանքի մը ու տանջանքի մը ազդեցութեան տակ՝ ականատես կըլլանք բոլոր այն եղեռններուն և ոճիրներուն, որ օսմանեան կառավարութեան պաշտպանութեանը ու օգնութեամբը քիւրտերու և թիւրքերու կողմէ ի գործ կը դրուին հայ ազգին հանդէպ՝ կը փութանք այս հեռագիրն ուղղել ձեզի ու մեր ամբողջ ուժով ու զօրութեամբ բողոքել բոլոր այդ ոճրագործ արարքներուն դէմ։

«Ո՞վ կազմակերպեց այս ջարդերը. ձե՞զ է պատասխանատուն բոլոր այս եղեռններուն որ հայերեան շրջաններն գործադրուած ամեն էջն անտեսուր ոճիրներն իսկ տուներէ մէջ կը ձգեն։ Ո՞վ ծածկեց այս սուգի քօղը, որ Կիլիկիայէն սկսելով մինչև Արաքս, մինչև Արարատեան լեռները ամբողջ Հայաստանի վրայ կը տարածուի։

«Ո՞վ է այս դժբախտ երկիրը աւերակներու կոյտի մը վերածողը։

«Ո՞վ է ան՝ որ տասնեց տարիքէ խորութեան բոլոր տղամարդիկը կը խողխողէ, աղջիկներն ու կիները կառեւանգէ, որ մնացող աւերակներուն վրայ կը ձգէ միայն ծերերն ու անկարները որպէս զի իրենց տառապանքն ու ցաւը ողբան։

«Սպաննուածներու թիւը հազարաւորներու կը հասնի, բոլոր հայ գիւղերը կողոպտուեցան, անոնցմէ շատերը բոլորովին փճացան ու կործանուեցան։ Ոճրագործներուն համար բաւական չէր ժողովուրդը կողոպտել, անոնց գոյքերն ու ապրանքները յափշտակել, բաւական չէր զինուորական տարիք ունեցողները հաւաքել ու փոխանակ բանակ ղրկելու՝ ամայի ձոր մը տանիլ զանոնք ու բոլորն ալ սպաննել, բաւական չէր զէնքէ զուրկ ու անպաշտպան հայերը նահանջի պարտադրել ու երբ դաշտահան անոնց ազգային ու

կրօնական զգացումներուն յարձակել
սպաննել, բաւական չէր հայ ազգին յայ
նի անձնաւորութիւնները արգելափակել
քանտարկել, հեռաւոր վայրեր աքսորել
պատրուակով փճացնել ու ամբողջ ազգ
ան ու սարսափի մատնել։ Այս բոլորը բ
աւական չէին։ Պէտք ու անհրաժեշտ էր
դարձեալ գերեզմաններ վերածել ամբ
Կիլիկիան ու Հայաստանը։

«Ո՞վ է ոճրագործը. այսօր ամբողջ աշ
խարհը ձեր դժբաղդ զոհերուն հետ միա
այդ բոլոր ոճիրները ձեր երեսին կը զ
նէ։ Անէծք կը կարդան ձեզի ձեր եր
կուան այն բարեկամներն ալ, որոնց հ
միայն միանոյն պնակին մէջ ճաշեցիք։

«Եւ սակայն ինչու այս նման չտեսնուած
եղեռնները։ Անոր համար՝ որ այս անմ
[illegible]
ռելով սամ. յեղափոխութեան գործին ա
տարեց։ Անոր համար որ հայերը լեզուա
խութեան մասին ձեզի երբ ուսուցին
ճանչնալ։ Անոր համար՝ որ անոնք մի
պատրաստ էին ձեր հրամաններուն անս
լու՝ պաշտպանելու համար նորակազմ օ
սահմանադրութիւնն ու ազատութիւն
Անոր համար՝ որ համիտեան յետադիմակ
շարժումին, երբ ձեր ընկերները ձեզ
լքեցին, անոնք հաւատարիմ մնալով Սահմ
նադրութեան՝ ոչ մէկ զոհողութիւն չխնա
ցին ձեզմէ։ Ձեր կառավարութիւնը մ
ընկերներէն մեծ մասը արգելափակեց.
անոնց մէջ կը գտնուէին այնպիսի անձ
զոր դուք իբր բարեկամ ու բարերարակ
յարգած էք։ Դուք պաշտպանեցիք այն խ
քին դէմ, զոր առած էք ձեր եղբայրան
նախկիններուն ու ապահովելով և ամբող
ջելով ձեր զէնքը՝ ուղղակի հայերու հա
ռակ քաղաքականութիւն մը սկսաք հետ
պնդել։

«Մենք աշխատեցանք ապացուցանել ձեզ
ձեր հետեւած յոռի քաղաքականութեան
նայնութիւնը։ Յայտնեցինք ձեզմէ, որ Ռ
սիոյ դէմ պատերազմ հրատարակելով չ
մէջ դէպի կործանում։ Յայտնեցինք, որ
նոյն Թիւրքիոյ գոյութիւնը աշխատող
պաշտպանող Անգլիոյ և Ֆրանսայի
ներքէ։

«Ի՞նչ ըրիք, երբ ձեր այս գործուր
ընկամները և հինաւուրց թշնամին՝ Ռ
սիան՝ ձեր երկրին ամբողջականութիւ
ապահովել կը խոստանային։ Դուք արհա
մարհէն շարժեցաք։ Գերմանիոյ ուժէն հմ
վելով՝ անոր գիրկը նետուեցաք, ձեր եր
ական պատերազմներուն դէմ կռնակ դ
ձուցիք ու բանակը, չէզոք քաղաքական
թենէն շեղելով սոս. պետութիւնը կոր
նում տաշնարգեցիք։

«Արդէն այսօր երկիրս բոլորովին
ծանեցաւ։ Դուք մեծ խառնաշփոթութիւն
և ավերիչ պարտութիւններ հրաւիրե
Հայաստանի սահմաններուն վրայ։ Ան
մար երբեմն կեանքեր փչացուց
Այսօր, ձեր հայրենիքը փրկելու անզօր,
մահուան պայքարն է, որ կը մղեք. վ
րէն կը նետուիք անպաշտպան, անպ

„ՄՇԱԿԻ" Գրասենեակի կողմից

Ի գիտութիւն բաժանորդների յայտնվում է, որ ապրիլի 1-ից
թերթի առաքումը կը դադարեցվի նրանց, ովքեր մինչև այ
վերանորոգած չեն ունենայ իրանց բաժանորդագրութիւնը

Արհեստաւորաց ակումբ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՑԱՐԱ-ՏԱԼԵԱՆ

Այսօր, երեքշաբթի, մարտի 25-ին,
Հայ օպերէտային խումբը
անմրցելի անսամբլով կը ներկայացնէ

Արշին մալ-ալան

4 գործ. Թարգմ. Մաղալեանի։

Գիւլչօրա	.	տ. Նուարդ
Ասկեար	.	պ. Շարա Տալե
Ասիա	.	տ. Աստղիկ
Սուլէյման	.	պ. Հայկազ
Թէլլի	.	տ. Գայիանէ
Վալի	.	պ. Տրդատեան
Ջանա	.	տ. Արուսեակ
Սուլթան-բէկ	.	պ. Կորկոտեան

Ուժեղացրած սաւական նուագախումբ
Սկիզբն է երեկ. ժամը 7 և կէսին։
Ուրբաթ, մարտի 28-ին, տ. Գայիանէի բ
նեֆիսը մասնակցութեամբ լաւագոյն
239. Տեղի։ 1—1

դժբախտ հայ ազգին վրայ։ Ձեր ծաղրածուական դերն է, որ մեզ, սուրեց հայերը չէթէներ կազմել, զէնք առնել ձեզի դէմ՝ պաշտպանելու համար իրենց վտանգուած գոյութիւնը։ Դուք ձեր ցանածն էք, որ կը քաղէք։

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգան «Դրօշակ» խմբագրական մարմինը, կուսակցութենէն անկախաբար, իր անհատական պատասխանատուութեան տակ՝ խօսքը կուղղէ ձեզի, Թիւրք պետական անձնաւորութիւններուդ, Իթթիհատ Թէրաքքըի անդամներուդ ու նկատելով ձեզ իբրև բարոյական և իրական պատասխանատուները հայ ազգին և օսմ. պետութեան դէմ գործուած այս ոճիրներուն, կամբաստանէ ձեզ»։

Լիման Ֆօն Սանդէրս կը բացայտէ հայ որբերուն թլփատութիւնը

Հակառակ տրուած վճռական հերքումներուն՝ անուրանալի է, որ զերման պետական անձերը պատասխանատուութեան լայն բաժին մը ունին հայերու և յոյներու դէմ ի գործ դրուած հալածանքներուն մէջ։ Հետզհետէ փաստեր երևան կելլեն այդ պատասխանատուութիւնը հաստատող։ Այսպէս հաւաստի աղբիւրէ առնուած մեր տեղեկութեանց համաձայն 1917-ի աշնան Գալէջէայէն ու շրջականներէն հաւաքուած 60 հայ որբերու թլփատութեան հանդէսին, որ տեղի ունեցած է Գանտըմայի մէջ, անձամբ ներկայ գտնուած է Լիման Ֆօն Սանդէրս՝ քաջալերած ըլլալու համար Թիւրքերը, պահ մը մոռնալով սակայն, որ նոյն Թիւրքերը Պէյքօզի մէջ իր աղջիկներն ալ թլփատած էին...

Գ. Վենիզելոսի յիշատակագիրը Հայաստանի մասին

Հելլէն վարչապետը, ինչպէս յայտնի է, խաղաղութեան համաժողովին ներկայացուցած էր ընդարձակ յիշատակագիր մը որուն մէջ փաստացիօրէն խօսած և պաշտպանած էր հելլենական պահանջումները։ Այս յիշատակագրէն կը քաղենք Հայաստանի վերաբերող հատուածը.—

Վիլսընի սկզբունքներուն համաձայն Թիւրք կառավարութիւնը պէտք է մերժուի հոն հաստատուիլ Անատոլուի մէջ ուրտեղ խառն ժողովուրդը մեծամասնութիւնը կը կազմէ։ Արևելքի մէջ Հայաստանի նահանգները Ռուսահայաստանին հետ միասին պէտք է առանձին կառավարութիւն մը կազմեն։

Այս կառավարութիւնը կազմակերպութեան պէտք է ըլլայ ազգերու դաշնակցութեան անունով, որուն կոչած փոխանորդը կրնայ յանձնուիլ մեծ պետութիւններէն մէկուն։ Անհրաժեշտ պէտք կայ այս տեսակ յանձնառու մը, որովհետև Հայերը և քառորդ դարէ ի վեր սկսած ջէօն-թիւրքերու վարչութեան օրով սասանեցուած բնաջնջման ծրագրին հետևանքով դժուար է գտնել Հայաստանի մէջ նահանգ մը ուր հայ մեծամասնութիւն գոյութիւն ունենայ։ Անտարակոյս հայ ազգին բնաջնջման համար կանոնաւոր կերպով գործ դրուած այս ծրագիրը չի կրնար պատճառ մը կազմել որ Թիւրքիան տիրապետութեան իրաւունք ունենայ հայկական նահանգներուն վրայ, քան մը որ պատճառ պիտի ըլլայ մարդկային խղճին վրդովման։ Աւելի զատ այս նահանգները զուտ թիւրքական ասանք ալ չեն, նկատելով որ թիւրքերը փոքրամասնութիւն կը կազմեն միւս ցեղերու համադասմամբ դէմ։ Տրապիզոնի նահանգը կրնար կցուիլ Հայաստանի կառավարութեան։

Այս կերպով Թիւրք վարչութենէն ազատուած պիտի ըլլան նոյն նահանգին մէջ համախմբուած 350,000 յոյները։ Այս տեսակէտով Հայաստանի կառավարութեան սահմանին մէջ կրնար գտնուիլ նաև Ատանայի նահանգը, ուր 700,000 յոյն կայ, ինչպէս նաև կարևոր թիւով հայ տարր մը։ Այս կառավարութեան ստորաբաժանումներուն կազմակերպութեան առթիւ պէտք է նկատի առնուին ազգ. և տեղագրական պահանջները և այս կերպով պէտք է հանգուցեալ վարչութիւն մը տալ քրիստոնեայ ժողովուրդին, որ այնքան դառն տառապանքներու ենթարկուեցաւ, իսկ յառաջիկային նոյն ժողովուրդին պէտք է ապահովել կատարեալ անկախութիւն մը։

Կիլիկեան շրջանի հայ զինուորներու խանդավառութիւնը

Ատանայի զինուորական հրամանատար տեղակալ-հազարապետ Թօմիէօ իր հրամանին ներքև գտնուող հայ զինուորներուն կոչ մը խօսած է յայտնելով որ թէև իրենց զինուորական ծառայութեան պայմանաժամը լրացած է, բայց տակաւին քանի մը ամիս զէնքի տակ պիտի պահուին, մինչև որ նոր հաւաքուած հայ զինուորներու մարզանքները լրանան և կարելի ըլլայ զանոնք զէնքի տակ առնելով գործածել։

Հայ զինուորները յայտնած են թէ իրենք պատրաստ են, ոչ թէ միայն մէկ քանի ամիս, այլ նոյնիսկ քանի տարի զինուորական ծառայութիւնը շարունակել, եթէ պէտք ըլլայ։

Արշաւիր ձերբակալուած

Նշանաւոր ազգադաւ և Պոլսի մէջ քանի Հնչակեաններու կախուելուն պատճառ եղող Արշաւիր Շահխանը Ատանայի մէջ վերջին օրերս բանտարկուած է կարգ մը հայերէ նոր շանթաժներ ընել ուզելուն պատճառաւ։

Հայակերներ անձնասպան կըլլան

Տարագրութեան միջոցին Գոնիայի մէջ ոստիկանութեան տնօրէն եղող տխրահռչակ Սաատէտտին պէյը, որ 6—7 ամիս առաջ նոյն պաշտօնով Հալէպ փոխադրուած էր, քաղաքին անկումին վրայ չկրնալով որևէ կողմ փախչիլ և վախնալով հայերու վրէժխնդրութենէն, անձնասպան եղած է։ Նոյն պատճառներով անձնասպան եղած է [illegible] Մերսինի ոստիկանապետ Թէվֆիք [illegible] բուած հրէշը, որ ջարդ մը հայերու [illegible] խառնած էր։

ՀԵՌԱԳԻՐՆ[illegible]

(Վրաստանի Հեռագրական Գոր[illegible]

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ[illegible] ՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

(Ռուս. բոլշ. հաղ.)

ՄՈՍԿՎԱ, 23 մարտի.—Ստացվել է հետևեալ ռադիօ Բուդապեշտից. բոլորին, բոլորին, բոլորին.

Մենք հաղորդում ենք ամբողջ աշխարհի բանւորներին, թէ սոց.-դեմ. կուսակցութիւնը և կոմունիստները միացան մի սոցիալիստական կուսակցութեան մէջ։ Բոլոր բանւորական, գիւղացիական և զինուորների խորհուրդների անունից մենք յայտարարում ենք պրօլետարիատի դիկտատուրա։ Մենք մեր ձեռքն առանք կառավարական իշխանութիւնը առանց մի կաթիլ արիւն թափելու, մինչև որ ունգար զինուորների, գիւղացիների և բանւորների կոնգրէսը վերջնականապէս կորոշէ ունգարական սոցիալիստական հանրապետութեան հիմնական օրէնքները։

Ունգարական պրօլետարիատը [illegible]լու է բուրժուազիայի դէմ [illegible] ցիալիստական հանրապետութեան [illegible] այն պրօլետարիատների հետ [illegible] րոնք յանգել են այն համոզման [illegible] ուրիշ ճանապարհ չը կայ [illegible] պերիալիզմի վրա յաղթանակ [illegible] և սոցիալիզմի իրականացման [illegible] բոլոր բանւորների և գիւղացիների [illegible] ցեալ գործը։

Չեխ-սլովակ և ռումինական բուրժուական ուժերը ջանում են ճնշել ունգարական յեղափոխութիւնը զէնքի ուժով։ Մենք դիմում ենք չեխ և ռումին բանւորներին և գիւղացիներին հետևեալ խօսքերով. «Դէն շպրտեցէք ձեր վրայից ձեր բռնաւորների լուծը»։ Մենք դիմում ենք ամբողջ աշխարհի պրօլետարիատին, մեր Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և գերման եղբայրներին և յորդորում ենք ոտքի ելնել բոլոր ուժերով ընդդէմ իրանց երկրների կապիտալիստների։

Կեցցէ համաշխարհային յեղափոխութիւնը։

Ունգարական ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից, արտաքին գործերի կոմիսար՝ Բելլա Կուն։

ՄՈՍԿՎԱ, 22 մարտի. Ռուսական խորհուրդների կառավարութիւնը ողջոյնի հեռագիր ուղարկեց ունգարական խորհուրդների կառավարութեանը։

Բուդապեշտից ստացվել է հետևեալ ռադիօ.

Ունգարական խորհուրդների հանրապետութիւնը առաջարկում է պաշտպանողական ու յարձակողական դաշինք Ռուսաստանի խորհուրդների կառավարութեանը։

Բոլոր ձեռնարկութիւնները յանձնված են ունգարական պրօլետարական պետութեան ձեռքը։

Դաշնակիցների [illegible] հեռանում է Բուդապեշտից։

Մենք ուղարկում ենք մեր ողջոյնը ընկեր Լենինին, իբրև միջազգային պրօլետարիատի պարագլխի, և երրորդ Ինտերնացիօնալին, որին և միանում ենք մենք։

Յեղափոխութիւնը Ունգարիայում արգասիք եղաւ դաշնակիցների նոր պահանջների։ Կարոլիի կաբինէտը հրաժարական տուեց։ Կարոլին կոչ հրատարակեց ժողովրդին, յայտնելով կառավարութեան հրաժարականի մասին և յայտարարելով, թէ իշխանութիւնն անցնում է պրօլետարիատին։ Բոլոր հասարակական շէնքերը բռնել գրաւվեցին խորհուրդների զօրքերով։ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընտրվեց Ալէքսանդր Գարբէյ։

Երէկ գիշեր ժող. կոմ. խորհուրդն արգելեց Ունգարիայում գործածել ոգելից ըմպելիքներ և յայտարարեց ամբողջ երկրում պաշարողական դրութիւն։ Առանձին դեկրետով վերացվեցին տիտղոսները ու աստիճանները. եկեղեցին պետութիւնից բաժանելու մասին, հաստատվեց առաջին յեղափոխական դատարանը Բուդապեշտում։ Ձեռնարկված է տների ու ձեռնարկութիւնների սոցիալիզացիայի օրինագծի մշակման։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

(Ռէյտերի գործակալութեան հաղորդագրութ.)

Բեռլինից հաղորդում են Կոպենհագէն, թէ Լիխտենբերգը նախկին բարոն Սոլ[illegible] խափանեց Սպարտակի խմբի հրացանաձգութիւնը խոշոր կռւով։ Նա յայտնում է, թէ աւելի քան 150 մարդ մահացվեցին Լիխտենբերգում և թէ Սպարտակին աջողվեց խուժել պոստային դրասենեակը, ուր գտնվում էր ուժեղ զօրամաս։ [illegible] ժամեա [illegible]ութիւնից յետոյ զօրամասը զինաթափ արվեց և գնդակահարվեց, իսկ պոստային ծառայողները ուղարկվեցին Բեռլին։

Կառավարական զօրքերը ձեռք բերին Սպարտակի բունը Միքայէլի տունում երկրորդ օրը, ձեռք ձգելով 160 մարդ, որոնցից 30-ը տեղն ու տեղը գնդակահարվեցին։ Կենդանի մնացած սպարտակեանները լեռներ թաքցին այգիներում, նկուղներում և արտերում, թաքնվելով մանր խմբերով։

Լրագիրները ասում են կառավարական զօրքերը առնելու են Լիխտենբերգը։

ԲԵՌԼԻՆ, 15 մարտի. (Ռուս. բոլշ. հաղ.). Բռնկվեց Սպարտակի ապստամբութիւն Բեռլինում։ [illegible] ակտիվական ֆ. բանակի շէնքերը բոլորովին քանդված են։ Դերված են ծովային դիվիզիայի զինւորները։ Սպարտակի կողմը անցած հանրապետական զօրքերը յանձնվել են զինուորական [illegible]։ Սպանվածների թիւը հասնում է 600 մարդ, իսկ վիրաւորվածների թիւը հասնում է մի քանի հազարի։

ՀԱՐԱՒ ՍԼԱՒՕՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

(Ռուս. բոլշ. հաղ.)

ՕԴԵՍՍԱ, 18 մարտի.—Արտասահմանից ստացված տեղեկութիւնների համաձայն, Կարագէօրգիէվիչների դինաստիան տապալված է. յայտարարված է հարաւ-սլաւօնական հանրապետութիւն։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԳԱԼԻՑԻԱՅՈՒՄ

(Ռուս. բոլշ. հաղորդագր.)

ԼՄԵՐԻՆԿԱ.—Այստեղ տեղեկութիւններ են ստացվել Գալիցիայում բռնկված ապստամբութեան մասին։

Հաղորդում են, թէ ապստամբներին ճնշելու համար ուղարկված զօրքերը միացել են ապստամբներին։

Ստանիսլավովում ապստամբները կալանաւորել են Գալիցիայի բաղաքի պարագլուխ Գօլուբովիչին։

Գալիցիայի մի քանի քաղաքներում կազմակերպվել են խորհուրդներ։ Նաւթային արդիւնաբերութեան ապստամբ բանւորներին միացել են ագարակների բանւորները։ Բացի դրանից բանւորներին միացել են ապստամբութիւնը ճնշելու համար ուղարկված զօրքերը։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Փարիզի լրագիրները ասելով, դաշնակիցները որոշել են գերման զօրքերի մէջ թողնել ընդամենը 4000 «օֆիցէր», նաւատորմը բաղկացած է լինելու 6 դրահանաւից, 5 յածանաւից ու 38 պատերազմանաւից։ Ծովային պաշտօնեաների թիւը լինելու է 260000։

◆ Բեռլինում կալանաւորվել են 200 ռուսներ։

※ Կլէմանսօն առաջարկել է զինուորական նախկին մինիստր Միլէրանին ստանձնել Էլզաս Լօթարինգիայի վարչապետի պաշտօնը։ Միլէրանը մեկնելու է Ստրասբուրգ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՐԱՑ. ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Վրաց Հիմնադիր Ժողովը մարտի 22-ի նիստում քննելով կառավարական դեկլարացիան ընդունեց հետևեալ բանաձևը.

«Լսելով Կառավարութեան կազմակերպելու զեկուցումը և վերջինիս գործունէութեան ծրագիրը, Հիմնադիր Ժողովը միաձայն հաւանութիւն է տալիս այդ ծրագրին, հաստատում է կառավարութեան կազմը և անցնում է հերթական գործերին»։

(Վ. Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

※ Այսօր երեկոյեան ժամը 7-ին Բարեգործական Ընկերութեան ընթերցարանի դահլիճում նշանակված է Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի արտակարգ նիստը։

※ Ախալցխայի նոր ընտրված ժողովրդական խորհուրդը հեռագրով դիմում է Վրաստանի Հիմնադիր Ժողովին, թէ այն ժամանակ, երբ Ախալցխան ինքնորոշվելով ազատ հիմունքներով մտնում է Վրաստանի հանրապետութեան մէջ, նրա երկրի մի մասը՝ Գոգէր շրջանը գրաւված է թաթարական բանակի կողմից, ինչ որ անթոյլատրելի է և ներկայ պայմաններում անհանդուրժելի, ուստի և խնդրում է Վրաստանի կառավ. գործադր. նախագահի միջոցով իրանց բուռն բողոքը լսելի անել դաշնակիցների բարձրագոյն ներկայացուցիչներին և միջոցներ ձեռք առնել կառավարական զօրքերը այդ շրջանից հեռացնելու մինչև Ախալցխայի պատմական սահմանը, մինչև Մզխէ գետը։ Հիմնադիր Ժողովի նախագահութիւնը մի ընդարձակ հեռագրով խոստացել միջոցներ ձեռք առնել Ախալցխայի սահմանները պահպանելու։

◆ Վրաստանի Հիմնադիր Ժողովի պրեզիդիումը յայտարարում է, որ ինքը ընդունելութեան ընդունում է պատգամաւ., երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը, ցերեկվայ ժամը 1—2 ը. Մուտքը [illegible]։

◆ Երէկվայ օրը, ժողովրդական Տանը տեղի ունեցաւ քաղաքային բոլոր հիմնարկութիւնների ծառայողների ժողովը Նուցուբիձէի նախագահութեամբ։ Ժողովը ձայների մեծամասնութեամբ որոշեց մարտի 24-ին յայտարարել գործադուլ։ Բայց երէկ այդ որոշման իրականացումը յետաձգվեց մինչև 24-ի երեկոյեան ժամը 6-ը, երբ պէտք է վերջնական քուէարկութիւն տայ ծառայողներին։ Գործադուլին չեն մասնակցելու տեղային էլէկտրոքարշը, ջրմուղը և սպանդանոցի ծառայողները։

※ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի որոշմամբ պէտք է մի ներկայացուցիչ ուղարկվի Ախալքալաքի շրջանը, Խորհուրդը [illegible] առաջարկել է Ախալքալաքի հայ բնակչական միութեան վարչութեանը մատնանշել թեկնածու։

※ Ստացանք «Գործաւոր» թերթի № 1-ը։ Թերթն օրգանն է Հնչակեան կուսակցութեան։ Լոյս է տեսնելու երկուշաբթի օրերը։

◆ Լեռնականների կառավարութիւնը մի ընդարձակ գրութեամբ ողջունում է Վրաստանի Հիմնադիր Ժողովի բացումը և ցանկանում, որ «Ալլահը օգնի նրան իր ծանր, դժուարին գործում»։

※ Թէֆլիսում ստացվել է Ադրբէյջանի խնամատարութեան մինիստրութեան մի կոչը, որով նա հրաւէր է կարդում օգնութեան հասնել Թուրք գաղթականութեան, որ կենտրոնացած մեծ մասամբ Ղարաբաղի շրջանում։

◆ Գրական-Գեղարվեստական Սալոնի հերթական հաւաքոյթը jour fixe-ը վշտի և յիշողութիւնների երեկոյ, որ այս անգամ կայանալու է ոչ թէ ուրբաթ, այլ հինգշաբթի, մարտի 27-ին, Սալոնի խնամակալուհի Զաբէլի Նազարեանի մահվան 5-րդ տարելիցի օրը։ Յիշատակվելու են Օրմանեան արքեպիսկոպոս, Տիրայր վ. Մաքսուդեան, Մինքան, Մինաս Բերբերեան, Լևւոն Մանուէլեան, Հայկազ, երաժշտագէտ Նալբանդեան, գերասաններ Արաքսեան, Մերաղեան, անդրիագործ Տէր-Մարուքեան, գնդապետ Սամարցեան, Մուրացան (մահվան 10-ամեակ) և այլն և այլն։ Պատշաճ կօնցերտային (հոգևոր) բաժին, բանախօսութիւններ և յիշողութիւններ։

◆ Բագուից եկողները պատմում են, որ մարտի 20-ին այնտեղ կայացել է միօրեայ գործադուլ Ասխաբադում գնդակահարված բագուեցի 26 յեղափոխականների սպանութեան վեցամսեակի առթիւ։

◆ Կիրակի օրը Թամոյեան եկեղեցում տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ Եսենտուկիում վախճանված բժ. Յովսէփ Բէկզադեանի և նրա մօր յիշատակին։ Ներկայ էր մեծ բազմութիւն, գլխաւորապէս ինտելիգենտ դասը և հանգուցեալի կուսակցական ընկերները՝ հայ, վրացի, ռուս, հրեայ։ Ներկայ էր և Վրաստանի արտաքին գործերի մինիստր Ե. Պ. Գեգեճկօրին։

◆ Կիրակի օրը, ղարաբաղցիների հայրենակցական միութեան վարչութեան կազմակերպած հասարակական ժողովը, որ անհագին բազմութիւն էր հաւաքել Արտիստական դահլիճում, չը կայացաւ։ Պատճառն այն էր, որ վարչութեանը վերջին ժամին տեղեկացրել էր, թէ Ղարաբաղի հարցը արդէն քննութեան մէջ է և յոյս կայ, որ լուծվի յօգուտ հայերի, ուստի և կայանալիք ժողովը կարող է նկատվել իբրև ցոյց։ Յայտնելով այս մասին, վարչութեան նախագահ պ. Լէօն ժողովին առաջարկում է համաձայնութիւն տալ վարչութեան ընտրած այն երեք անձնաւորութեան, որոնց հետ Ղարաբաղի Հայոց Ազգ. Խոր. դիւանագիտական ներկայացուցիչները կը վարեն Ղարաբաղի քաղաքական բանակցութիւնները դաշնակիցների հետ։ Այդ երեք անձերն են— Յովսէփ Թումանեանց, Ղ. Տէր-Ղազարեան և Վ. Նաւասարդեան։ Ժողովը համաձայնութիւն տալուց այդ առաջարկին և ցրվեց։

ՓՈՔՐԻԿ ՖԵԼԻԵՏՕՆ

ՆԱԽԱՍԵՆԵԱԿԻ ԱԶԳԵՐ

Պարիզեան թերթ մը «Լա Լանթեռն» «Նախասենեակի Ազգեր» մակդիրը կուտայ այն ազգերուն, որոնց պատգամաւորները Վերսայլի խաղաղութեան համաժողովին մէջ չեն ընդունուած՝ այլ դուրսը, նախասենեակի մէջ, կը սպասեն։

Հարկ է ըսել, թէ պարիզեան թերթը նախասենեակի ազգերուն դասը դրած է նաև հայերը։

Սակայն կերեւայ, որ նախասենեակի մէջ սպասողները միայն հայերը չեն. ուրիշ ազգեր ալ կան հոն, ինչ որ անշուշտ մխիթարական է մեզի համար։

Անգէթը այն է, որ մինչև հիմա այսպէս նախասենեակին մէջ պիտի սպասենք, թէ ի վերջոյ մեզի ալ ներս պիտի հրամցնեն։

— Մեզի ալ սանկ պզտիկ աթոռ մը տուէք ձեր քովիկը, պարոններս հասկցնենք—կ'ըսեն հայերը, ուքրանացիները, վրացիները, ադրպատականցիները և ուրիշներ։

— Մուտքը արգիլեալ է—կը պոռէ դռնապան Կլեմանսօ։

— Բայց մենք ալ ձեր պզտիկ դաշնակիցներն ենք։

— Այո, սակայն խօսելու իրաւունք չունիք։

— Միասին կռուեցանք, միասին արիւն թափեցինք։

— Ճիշդ է, և ատոր վարձքը պիտի առնենք. համբերութիւն քիչ մը։

— Համբերութիւննիս սպառեցաւ։

— Շատը գնաց՝ քիչը մնաց...

Եւ այսպէս՝ Պօղոս Նուպար և Ահարոնեան նախասենեակին մէջ վեր վար կը պտտին։

Բարեբախտաբար Վենիզէլոս ներսն է ու մեր դատին պաշտպանութիւնը ստանձնած կը թուի։

Այն օրն, ուր Հայաստանի անկախութիւնը համաժողովին կողմէ պաշտօնապէս հռչակվի, մեծ սրահին դուռը պիտի բացուի ու Պօղոս Նուպար և Ահարոնեան թև-թևի պիտի կրնան անցնիլ նախասենեակէն ու ներս մտնել։

Բայց այն ատենն ալ հարկ չը պիտի մնայ ներս մտնելու։

Երուանդ Օտեան

(«Ժողովուրդ»)

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Գորիսից, 18 փետրվարի

Զարմանալութիւն չի լինի, եթէ ասենք, որ Բագուի վերջին կոտորածների ժամանակ ամենից շատ տուժողը եղել են մեր գիւղացիները, որոնք մի քանի տարիներից ի վեր ապրում են Բագւում։ Այժմ գիւղումս տներ կան, որոնց անդամները Բագւում ընտանիքներով միանգամայն փչացել, կուլ են գնացել թիւրք-ադրբէջանական բարբարոս զօրքերի։ Այդ դեռ բաւական չ[illegible] էլ մի վերջ ստացված. Բագուից վ[illegible]արձող մեր գիւղացիներին Եւլախի [illegible]արհին են յանձնում բանտում և չարչարելով [illegible]ճառաբանելով, որ պարեցիք անձ[illegible] չի ադրբէջանցին։ Այսպէս օր[illegible] գիւղացի Յակոբջան Աւետիսեան [illegible] Աղդամից 4 կուսէզը և 4 [illegible]են բռնել Աղդամից անցնելիս [illegible]։ Բանտերն եղել են քաղաքացի [illegible] Ալասկար-օղլին և Խանքենդի պետի [illegible]։ Վերջինս այդ փողերը պատճառաբանել է նրանով, որ իբր թէ պարեցիները յիշեալ Մահմադի 3 գլուխ անասունը գողացել են, և բողոքները այդ մասին, թէ ինչով են մեղաւոր Յակոբջան ու Սանդրոն, եթէ նոյն ինքը բոլոր գիւղացիները փոխեն Սահմադի անասունը գողացողներ (որ կարող է պրովոկացիա էլ լինել), մնացել են տարանջի։

Երևում է մեր գիւղացիք պիտի զրկուեն Աղդամ գնալ և առ հասարակ խճուղով հաղորդակցվել։

Թաղլար, 27 փետրվարի

Մեր գիւղացիների մեծամասնութիւնը քաղց-կարօտ տանջւում է սովի ու համաճարակի ճիրաններում. օր չէ անցնում, որ մեռնողների թիւը չը հասնի 7—8 հոգու. Ժողովուրդը յուսահատ դրութեան [illegible]։

Գիւղում շատ կան հարուստ [illegible]կ, սակայն ինչ փոյթ է նրանց. նրա[illegible]այն զուարճանում են։ Սոված, կիսամ[illegible] խանք այս ու այն կողմը վը[illegible] են ապրում ու լալիս... երկու [illegible] ընթացքում մեռելների թիւը հա[illegible] է 150—200 հոգու։

Կարծես շուտով գիւղը կը դառ[illegible] մի ամայի վայր... սարդիկ երար մռայլ[illegible]են-

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

— Կարեաղին կցված Հողեր գիւղացի թուրքերը փետր. 6 ի գիշերվայ ժ. 3-ին յարձակում են գործել Հողեր գիւղի հայերի վրայ։ Շրջանի հրամանատարը անմիջապէս դէպքի վայրն է շտապում 30 զինուորների հետ և յարձակումը ետ մղում։

— Փետր. 10—23-ին Ղշլաղ գիւղից Աղդամ գնացած հայ գիւղացիներից թիւրք ասկերները ուժով խլում են սայլերի մի մասը բանեցնելու, միւս մասից 2000 ր. կաշառք են վերցնում և բաց թողնում, իսկ Խանձք գիւղացի Մարտիրոս Աւետիսեանից խլել են մի զոյգ եզ։

— Փետր. 19-ին Խծաբերդ գիւղացի Նիկոլայ Յակոբեան և Արփագուդ գիւղացի այլապետ Միրզոյեան մի քանի համագիւղացիների հետ Աղդամից վերադառնալիս ենթարկվում են Ջանգաղուրի Փարաջան գիւղի թուրքերի յարձակման։ Սպանվել են Նիկ. Յակոբեան և Հայրապետ Միրզոյեան։ Թուրքերը տարել են մի ձի։

— Դօլանլար գիւղացի Կարապետ Տէր-Զաքարեանը անցած յունվարի 23-ին գնացել էր Ջանգեզուրի Բաժարաթ թուրքական գիւղը ալիւր և բրինձ գնելու, որտեղ և սպանվել է գիւղի թուրքերի ձեռքով։ Թուրքերը տարել են 2000 ր. և «Լեբել» հրացանը 1000 փամփուշտով։

— Փետր. 26-ին, առաւ. ժ. 10-ին, Թթու Ջրում թուրքերը յարձակվել են Ջանգեզուրից վերադարձող հայերի վրայ։ Սպանվել են Դաւիթ Յարութիւնեան, Սարգիս Յովհաննիսեան, վիրաւորվել են Ալէքսան Կարապետեան և Տեղ գիւղացի Դանիէլ։

— Գիւլատանից հաղորդում են, որ վերջին ժամանակներս թշնամական վերաբերմունք է նկատվում թուրքերի կողմից դէպի հայերը։ Տեղի են ունեցել մի քանի անդէն հայերի սպանութիւններ։ Այսպէս օր. փետր. 22-ին սպանվել են 6 հոգի։ Այդ բոլորի մասին տեղական հասարակութիւնը լրագրել է կապիտան Ա. Զախարբէկեանին՝ յայտնել անգլիական միսսիային։

(«Նոր-Կեանք»)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 22 մարտի

Թիֆլիսի հայկական միջնակարգ դպրոցների (Ներսիսեան, Յովնանեան և Գայեանեան) VII և VIII դասարանների աշակերտութիւնը ջերմ աջակցութեամբ այդ դպրոցների մանկավարժութեան դասատուների և մի քանի վարժուհիների կազմակերպել է մի Մանկավարժական Խմբակ, որի նպատակն է «Նպաստել իր անդամների մանկավարժական թէ տեսական (թէօրէտիկ) և թէ գործական (պրակտիկ) զարգացմանը»։ Խմբակս ունեցել է մի շարք սիստեմատիկ դասախօսութիւններ, ըէֆերատներ և փորձնական դասեր ու այդ դասերի քննադատութիւններ։ Խմբակիս ներկայ գործունէութիւնը գրաւական է, հանդիսանում, որ իրօք նա պէտք է հասնէ իր առաջադրած նպատակին։

Սակայն մի արգելք, որ ծառանում է Խմբակիս առաջ՝ դա շրջակայքում մանկավարժական գրքերի բացակայութիւնն է։ Այս խոչընդոտը վերացնելու համար Մանկավարժական Խմբակս դիմում է հասարակութեանը և բոլոր կազմակերպութիւններին նուիրաբերել կամ վաճառել Խմբակիս իրանց մօտ եղած մանկավարժական գրքերը։

Խմբակս լիայոյս է, որ հասարակութիւնը անտարբեր չի մնայ դէպի նոր սերունդի անպայման խրախուսելի քայլերը և լայն արձագանք կը տայ այս դիմումին։

Նուիրաբերութեան կամ վաճառելու համար դիմել Գայեանեան դպրոց, VIII դաս. աշակերտուհի Ս. Մարտիրոսեանին ամեն օր ժամը 9—1-ը։

Վարչութիւն

Թիֆլիս, 24 մարտի

«Մշակի» ներկայ տարվայ մարտի 14-ի 56-րդ համարում «Մեր գիմնազիաներում» վերնագրով Ո-ի ստորագրութեամբ լոյս տեսած յօդուածի մասին Թիֆլիսի երկրորդ արական գիմնազիայի ծնողական ընկերութեան խորհրդի կողմից խնդրում ենք զետեղել հետևեալը ձեր թերթում.

Թիֆլիսի երկրորդ արական գիմնազիան հայացված է և, համաձայն Վրաստանի լուսաւորութեան նախարարութեան կարգադրութեան, կրօնը մեր գիմնազիայում նմանապէս դուրս է հանված պարտադիր առարկաների ցուցակից։ Սակայն նոյն կարգադրութիւնը թոյլ է տալիս կրօնի ոչ իբրև պարտադիր առարկայի դասաւանդումը, եթէ ծնողները յայտնելու լինեն իրանց ցանկութիւնը այդ առարկայի ուսանելու մասին և ծախսերը վերցնեն իրանց վրայ։ Այս դէպքում գիմնազիան պարտաւոր է ըստ նախարարութեան կարգադրութեան իր շէնքում տեղ յատկացնել դասերի համար։

Ծնողներից շատերը դիմել էին ծնողական ընկերութեան խորհրդին կազմակերպելու կրօնի մասնաւոր դասեր իրանց երեխաների համար։ Ծնողական ընկերութեան խորհուրդը, հիմնվելով խղճի ազատութեան սկզբունքի վրա, որ յամենայն դէպս ամեն մի քաղաքացի ի շարս այլ ազատութեանց իրաւունք ունի վայելելու մեր դեմօկրատիկ հասարակապետութեան սահմաններում, կազմակերպեց մի անկէտ գիմնազիայի աշակերտների բոլոր ծնողների մէջ։ Այդ անկէտը, գրաւոր և ստորագրված ամեն մի ծնողի ձեռքով, ցոյց տուեց, որ 180 ծնող ցանկանում են, որ իրանց երեխաներին կրօն ուսուցվի։ Եւ ծնողական ընկերութեան խորհուրդը պարտաւոր էր յարգել յիշեալ ծնողների այդ կամքը։ Այսպէս էլ մեր գիմնազիայում մարտի 1-ից կազմակերպվեց կրօնի դասաւանդումը ցանկացողների համար և ոչ թէ «փարաջաւոր կամ ոչ փարաջաւոր վարդապետների քարոզների» ազդեցութեան տակ, ինչպէս առաջ է բերում պ. Ո-ն իր յօդուածում։

Ծնողական ընկերութեան
խորհ. նախ.՝ բժ. Ա. Շէխեան

Ծանօթ. խմբ.—Մեր աշխատակցի խօսքը չէ եղել այն դէպքերի մասին, երբ ծնողների ցանկութեամբ և ուսումնարանական վարչութեան գիտակցութեամբ յատուկ կրօնի դասեր են առեղծվել գիմնազիայում, այլ այն, որ փարաջաւոր ու ոչ փարաջաւոր վարդապետները, իրանց սեփական ինիցիատիւվով, հայոց լեզուի դասերի փոխարէն կրօն են աւանդում։

Խմբագիր՝ ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝
Ե. ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆ
ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿ. Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
հիմնված 1880 թ.
(Ամալյա, Վօրօնցովի արձանի մօտ)
Բ ա ց է
Ամեն օր, բացի կիրակի օրերից
606» և «914»-ի ներարկում առ. 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական, վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ։
[illegible] ԱՂԱՍԱՐՑԵԱՆ—10—12 ժ., ներքին [illegible] երեխայոց հիւանդութիւն և ծննդաբերութիւն։
Ս. Ա. ՉԱՒՑՑ—10—11 ժ. աչքի հիւ.
Ս. Դ. ԱՐԾՐՈՒՆԵԱՆ—11—12 ժ. [illegible] վեներական (սիֆիլիս) հիւ.
Ս. Կ. ՏԵՑԵԿԱԿԱՑԵԱ-ԿՆԴԷԼ—12—1 ժ. երկուշաբթի, չորեքշ., ուրբաթ, կանանց հիւ. և մանկաբարձ.
Բ. Մ. ԿԱՑՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ., շաբաթ, կանանց հիւ. և մանկաբարձ.
Ժ. Ա. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ.
Վճարը 3 ր.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդակցութեան, կոնսիլիումի և օպերացիայի համար՝ առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ գրական, արուեստագիտական
երաժշտական պատկերազարդ հանդէս
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
Թիֆլիսում
ԲԱՑՎԱԾ Է 7-ՐԴ ԵՒ 8-ՐԴ ԳՐՔԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂ 50 ՌՈՒԲԼԻ
(Միայն 7-րդ գրքի բաժանորդագինը 30 ռուբլի)
Թիֆլիսում կարելի է բաժանորդագրվել «Գրքի գեղարուեստում»։ Օտար [illegible] Тифлисъ. редакція „Гехарвестъ“.
ՆԱԽՈՐԴՆԵՐԸ. «Գեղարուեստի» ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ գրքերը վաղուց սպառված են. ՉՈՐՐՈՐԴ գրքից մնում են սակաւաթիւ օրինակներ, որոնց համար վճարվում է 15 ռուբլի. ՀԻՆԳԵՐՈՐԴ գիրքը [illegible] 20 ռուբլի. ՎԵՑԵՐՈՐԴ գիրքը 30 ռուբլի. [illegible] ՀԻՆԳԵՐՈՐԴ և ՎԵՑԵՐՈՐԴ [illegible]
(Ն.) 193. 3—3

ТИФЛИСЪ, Типографія „ЭКОНОМІЯ“ М. Мугдуси-Акоповой съ С-ми Большая-Ванкская ул. № 3.